

ցել նրա ապրումների եւ յոյզերի, նրա խոհերի եւ վշտերի հետ: Եւ այդ բոլորը դրոշմել է իր պոէմաների մէջ:

Այստեղ հայ գիւղի կեանքն է ցոլանում, գիւղական իրականութիւնը բիւրեղանում: Այդ տեսակէտից Թումանեանի պոէմաներն անզուզական են: Բայց գիւղական միջավայրի եւ իրականութեան ո՞ր կողմն է Թումանեան առանձնապէս պատկերացնում: Դիմաւորապէս նա գիւղական կեանքի հոգեկան կողմն է ցուցանում, գծում է գիւղի բարոյական աշխարհայեացը պատկերը:

Այդ պատկերի մէջ կարմիր թելի նման անցնում է նահապետական բարոյականութեան, «նոց աղաթի», երկաթէօրէնքը, որ գերազանցօրէն իշխում է գիւղական մի ամբողջ հասարակութեան վրայ: Մի ամբողջ ժողովորդ տնքում է այդ օրէնքի դաժան շղթաների մէջ: Գեղջուկների աշխարհայեացը, հոգին ու միտքը, կամքն ու խիղճը, հաւատն ու բարքերը ենթակայ են «աղաթի», դաժան իշխանութեան ներքոյ: Անզամ գիւղի իշխթները գալարուում են նրա կապանքների մէջ:

Գիւղում ամեն ինչ ընթանում է «աղաթով», որովհետեւ դա նահապետական մի աւանդ է, «ընտանեկան մի պրութիւն»,: Եւ այդ սրբութեան անունվ առաջանում են գիւղական սրտաճմէիկ դրամաները: Խամրում է գիւղում ինը տարեկան մատադի կեանք, աղաթի անունվ: Վրիժառութեան կարմիր զնդակով ընկնում է գիւղի իզիթը, աղաթի անունվ: Խորտակուում է սիրող սրտերի ջերմ սէրը, աղաթի անունվ:

Բարոյական քայբայման այդ պատկերները գծել է Թումանեան իր պոէմաներով: Այստեղ նրա տաղանդը ուժեղ է, խորը, գերազանց: Այստեղ նրա վրձինը խօսուն է, կենդանի, շաբժուն: Այստեղ նրա պատկերները ընական են, որոշ եւ

յատակ, ուր միտք կայ, զգայմունքների խորութիւն կայ, թոփչք կայ, կեանք կայ: Դուք տեսնում էք նրա զծած պատկերները եւ խորապէս տպաւորուում:

Գիւղական այդ պատկերներից մէկը «Անուշն,, է:

(Ը-Շ-Ն-Ա-Բ-Ե-Ւ-)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆԻ



ԿՈՄԻՏԱՍ ԱՅՐԴԱՊԵՏ

I.

Երաժիշտը:

Զուր ևնք սպասում որ տաղանդաւոր արուեստագէտը վերադառնայ դարձեալ մեր մէջ, իր քաղցր ձայնով արցունքներ խլէ մեր աչքերից եւ մեղ տանէ պտաշնելու Արաքսի եւ Եփրատի ավելն, Ալագեազի եւ Արարատի փէշերը: Մեր ականջները ևլ չեն լսում այն համերգները, երբ բոլորս միամին այդ կախարդական ձայների ազդեցութեանը տակ՝ ձամբորդում էինք Հայուստանի ձիւնապատ լեռների գագաթները: Կանաչ արօտներ եւ հազարադոյն ծաղկիներ էին անցնում մեր աչքերի տակով:

«Մեծ տառապողն էր որ կը խօսէր այնտեղ, մեծ համը, մերթ տխուր ու վըշ տարեկ իր «Կոռունկ» երգին մէջ, մերթ յուսալից Մազթաղինացիին ողբերովը, մերթ ուաղմական՝ Սիփանի սիւգերուն տակ, մերթ կեանքով առլուն՝ իր լէլէներուն այնքան անցշա այնքան բնատոհմիկ մելոդիներուն յանկերգներով¹»:

Նա ո՞ր այնքան մէծ յաջողութեամբ հայ երգը տարաւ հասցրեց Ալպեան սպիր-

¹ Պատմեան «Աղատումարտ» 1910

տակ կատարները, Զուիցերիայի երազային Ծակների ափերը եւ նա որ սրտեր նուածեց, նրան այլ եւս վերադարձ չկայ: Այն ինչ որ “Կռունկ”ի անզուգական երգիչը կատարեց, երաժշտական պատմութեան է վերաբերում սրանից յետոյ եւ արդար սեփականութիւնը պյարուայ եւ եկող սերնդների:

Տարաբախտ Մակար Եկմալեանի նման հայր Կոմիտասն էլ չկարողացաւ երաժշտական իր վերջին խօսքը ասել եւ անժամանակ լուռթեան դատապարտուեցաւ:

Պարիսի հիւանդանոյներից մէկում, չորս պատերի մէջ փակուած, սեւ շնչազգեստը գլխին քաշած, միշտ մռայլ ութեածոտ, եօթը տարի շարունակ դժբախտ արուեստագէտը երգերմարդկային պայքարէ մղում մահուան եւ կեանքի միջեւ: Ժանր են եւ դժնդակ այն օրերը, որի մէջ նա ապրում է. կարուած աշխարհից, հեռու մարդկանցից, ամփոփուած իր մեծ վշտի մէջ, չարչարուում է նա եւ տանջուում . . . :

Չնայած որ տարիների հետ է կապուած նրա խելագարութիւնը եւ անսպասելի հիւանդութիւնը, սակայն մարդո չի կարող հաշտուել այն մաքի հետ, թէ նա վերջնականպէս լուել է: Մեզանից իւրաքանչիւրը նրան սպասում է. բոլոր աննպաստ եւ յուսահատական լուրերը նրա առողջութեանը մասին մնում են լոկ դատարկ խօսքեր: Բայց երբ վառ զգացմունքներին յաջորդում է սառն տրամաբանութիւն, երբ դէպքերին եւ երեւոյթներին նայում ենք իրատեսի աչքերով, այն ժամանակ ակամայից հաշտուում ենք դառը իրականութեան հետ:

Նրանք, որոնք մօտիկից ծանօթ են Հայր Կոմիտասի կատարած դորձին, կարդացել են նրա հետաքրիր եւ դիտական յօդուածները հայ երաժշտութեանը մասին, նրանք, որոնք լսել են նրա այնքան պերճախօս դասախոսութիւնները, ներկայ են եղել նրա կազմակերպած համերգներին, որոնք ամենութիւնները ունեցել են աննախնթաց յաջութիւն, եւ վերջապէս նրանք, որոնք իմա-

յել են այն մեծ պրոպականդը որ նա արաւ Երապայում ծանօթայնելով օտարներին հայ աշխարհիկ եւ հոգեւոր երաժշտութիւնը, նրանք բոլորն էլ այսօր զգում են թէ ինչ է կորսնցնում հայ երաժշտական աշխարհը նրա հիւանդութեանը պատճառով:

Այն աննախնթաց շարժումը որ նա առաջ բերաւ, այն դորձը որ նա կատարեց, մեծ է եւ պիտի մնայ անմոռանալի, որքան էլ նրա աշխատանքները ունենան թերի կողմեր եւ պակասութիւններ:

Կոմիտաս վարդապետը մեր երաժիշտների մէջ կարելի է ասել միակը եղաւ, որ իր ուսերի վրայ կրեց հայ երաժշտութեանը բախտը, եւ զրա համար նա պիտի մնայ մեր երաժշտութեան պատմութեանը մէջ ամենափայլուն աստղերից մէկը եւ իր առուեստի խորութեամբ պիտի կանգնի առաջնակարգ գծի վրայ: Մեր երաժշտական անապատում, նա եղաւ արծաթափայլ մի աղբիւր, որից բոլորս ջուր ու գեղցինք խմել:

Էինք մեր կարօտած աչքերով:

Հովիւների քաղցրահնչիւն սրինգը, լաւ կան եւ դարդոտ օրօնները, պանդիստի եւ կարօտի աղաղակները, կալի երգերն ու սիրահարուած զցցերի լէլէները, պարերգերն ու հարմարգերը, դիւցաղնական եւ ռազմական հուժկու երգերը, որոնք մնում էին մական հուժկու երգերը, որոնք մնում էին օտար աղդեցուանմշակ եւ գտնուում էին օտար աղդեցութեան տակ, Կոմիտաս վարդապետի անթեան ջանքերով եւ նրա գիտական պատճառութեան շնորհիւ մշակուեցան, կատարելագործուեցան եւ պահեցին հայկական երաժշտութեան ինքնուրոյնութիւնը:

Հայ ժողովրդական երգերը տարածուած են Հայաստանի բոլոր անկիւնները. իւրաքանչիւր տեղի ժողովուրդ նոր տարրեր է մոնցնում այդ երգերի մէջ, աւելացնելով նոր խաղեր, նոր ելեւէջներ եւ նոր զգացմունքներ:

Եւ որովհետեւ Կոմիտաս վարդապետը

շրջել է Հայաստանի գլխաւոր քաղաքներն ու գիւղերը, հաղորդակից է եղել բուն ստեղծագործ ժողովը հետ, այդ իսկ պատճառով ըմբռնել է եւ հասկացել հայ ժողովրդական երգի արժեքը, բովանդակութիւնն եւ գեղարուեստական զարգացման ամբողջ շընը: Գրի առնելով հայ երգը, նա մեծ յաջողութեամբ դուրս է ձգել աւելորդ եւ օտար տարրեր՝ տալով այդ երգերին, ամբողջովին հայկական դրոշը եւ ինքնուրոյն: թիւն:

Մեծանուն երաժշտագէտի սկզբնական աշխատութիւնները ամէն կասկածից վեր է, որ կրում են գերման մեծ վարպետների ազգեցութիւն, սակայն ժամանակի ընթացքին, նրա տաղանդի զարգացմանը հետ զուգընթացաբար վերանում են այդ ազգեցութիւնները: Այս կարծիքին է նաև երաժշտուչի Մարգարիտ Բաբայեանը, որը որոշ տարիներ աշխատել է սիրել արուեստագէտին հետ:

Ծնորհիւ իր արտակարգ եւ բացառիկ տաղանդի, նա հսկայ շարժում ստեղծեց:

Կորստեան, աղաւաղման ենթակայ հայ գեղուկ երգը կեանք առաւ եւ թրթուաց հարազատ ու քաղցր: Այդ երգերի մէջ լայն շունչ կայ եւ խոր թափ: Հայ շնականի շրմների վրայ թրթուացող երգերի մէջ, մենք զգում ենք շարժումը սարերի քնքոյշ ծաղկեների: Կալի երգերի մէջ մենք լսում ենք սայլի անիւների ճռուոյը, եզների բառաչը: Ուազմական երգեր լսած ժամանակ ապրում ենք պայքարի ամբողջ ընթացքն ու տեւողութիւնը: Մենք ակամայից հաղորդակից ենք լնում հայ մօրը անցը օրուներին, երբ նա ի՛ բալիկը քնացուցած պահուն երգում է այնքան կարօտվ, այնքան զգայուն:

Իսկ երբ լսում ենք պանդիստի, զիւցազներգութեան եւ անտունի երգեր, այնտեղ զգում ենք մի մեծ դարդ, որ Արաքսի նման դանդաղ եւ խորհրդաւոր հոսում է

եւ անցորդին պատմում հայ ժողովրդի դարաւոր վիշտն ու տառապանքը:

Հայ ժողովրդական երգը իր մէջ ամփոփում է ուրախութիւն եւ տիսրութիւն, ծիծաղ եւ լաց, արցունք եւ ժպիտ: Եւ տաղանդաւոր արուեստագէտը հասկացել է կեանքի երկու ծալքերը վիշտն ու ուրախութիւնը:

Զուգենալով այստեղ խօս' լ ապրով սակաւաթիւ հայ տաղանդաւոր երաժշտագէտների գործերի մասին, առանց շափազնցութեան կարելի է ասել որ Կարա-Մուրզան, Մակար Եկմալեան եւ Կոմիտաս վարդապետ մեր աշխարհիկ եւ հոգեւոր երաժշտութեան երեք սիւներն են: Սրանք բոլորն էլ անշուշտ տարբեր տաղանդների տէր արուեստագէտներ են, բայց բոլորի նպատակը եղել է նոյնը: Տաղանդի տարբերութիւնից զատ, այս երեք արուեստագէտները տարբերում են նաև իրենց աշխատանքի տեսակովը, բայց այս պարագան էլ ոչինչ չել խանդարում:

Խաչատուր Կարա-Մուրզան առաջինը եղաւ, որ ներդաշնակեց Հայոց պատարագի մի քանի երգեր, նրա շնորհիւն էր որ Հայոց եկեղեցին ծանօթացաւ քառաձայն երգեցութեան հետ: Ճիշտ է որ նրա գործերի մէջ նկատուում է երաժշտական կանոնաւոր կրթութեան բացակայութիւն, գիտնական երաժշտագէտի պատրաստութիւն, սակայն այն ինչ որ նա կատարեց իր խաւ ար ժամանակաշրջանում մեծ եղաւ եւ անմոռանալի: Կարա-Մուրզան եղաւ հայ ժողովրդական երգի պլոտականդիստ: Ամենագառն, եւ նիւթական ամենաաննպաստ պայմանների մէջ, նա թափառեց քաղաքից քաղաք, գիւղեց գիւղ, շրջեց հայաբնակ բոլոր վայրեր եւ հայ անմշակ երգեր քառաձայնի վերածելով բեմ հանեց՝ արժանալով բոլորի ուշադրութեան եւ դովասանքին:

Նրանից յետոյ Գէորգեան ճեմարանի նախկին սան, Մակար Եկմալեանը, որը աւարտել էր Պետրոս բզի երաժշտանոցը, նըւիրուեց ամբողջապէս հայ հոգեւոր երաժշտութեան մշակման եւ ներդաշնակման (harmonie) գործին: Նա ուղղից եւ կարգի բերաւ Հայոց պատարագի երգիրը: Նա չվայելց այն մեծ ժողովրդականութիւնը, ինչ որ Կարա-Մուրզան ունեցաւ. նա եղաւ կարինետային աշխատող: Բայց ոչ մէկ կասկած չի կարող լինել, որ վերջինս անպայման աւելի տաղանդաւոր արուեստագէտ էր: Եկմալեանը լինելով գիտնական երաժիշտ, աշխատեց խուսափել խրոմատիզմից, որը ահազին գժուարութիւն էր պատճառում կանոնաւոր եւ ներդաշնակ երգեցողութեան: Եւ իսկապէս նա հակառակ խրոմատիզմին՝ մոցրեց դիատոնիզմը, որ մեծ չափով յաջողուեց արուեստագէտին:

Այսեղ անհրաժեշտ ենք գտնում նշանաւոր ռուս յօրինող (compositeur) եւ Պետրոգրադի երաժշտանոցի տեսուչ Կլազոնովի կարծիքը ասել Եկմալեանի տաղանդի մասին: Պետրուրգում նա յայտնել է պետական դումայի անդամ Յովհ. Սաղաթէլեանին թէ “Եկմալեանը սակաւընդունակ է, իսկ պատարագը գրուել է բարար,,”:

Կարա-Մուրզայի եւ Եկմալեանի գործերի վրայ, տարաբախտաբար, այս թուուցիկ ուսումնասիրութեանը մէջ չենք կարող հանդամանօրէն կանդ առնել. գուցէ մի ուրիշ առթիւ մենք անդրադառնանք նրանց աշխատանքներին:

Եթէ առաջնը եղաւ հայ երգի տաղանդաւոր պլուպականդիխար եւ երկրորդը հոգեւոր երաժշտութեաններկայացուցիչ, ապա Կոմիտաս վարդապետը է եւ պիտի մնայ հայ ժողովրդական երաժշտութեան ամենատաղանդաւոր վարպետը:

Կոմիտաս վարդապետը եղել է նաեւ համերգների կազմակերպիչ եւ կապէլմայսէր: Հայ հոգեւոր եւ աշխարհիկ երաժշ-

տութեան մասին դասախոսութիւններ է կարդացել Նորոպայի նշանաւոր գեղարուեստական կենդրոններում եւ օտարների կողմց արժանացել է մեծ գովասանքի: Գրել է հայ երաժշտութեան մասին յօդուածներ: Այս բոլորը օղակաւորուած եւ շաղկապուած լրար՝ աւելի մեծ գեղարուեստական արժէք են տալիս նրա տաղանդին: Այս բոլորի մասին մենք կը վերադառնանք յետոյ:

Որպէս զե հնարաւոր լինի նրա գործերը աւելի լաւ հասկանալ եւ ըմբռնել, ապա անհրաժեշտ է որ նախ ծանօթանանք նրա դաստիարակութեանը եւ կը թութեանը հետ:

II.

Նրա կեանքը:

Սոլոմն Գէորգեան — այս է եղել նրա մկրտութեան անունը — Ճնուել է 1869 թուի սեպտ. 28-ին Փոքր-Ասիայի Կուտինա քամ Քէօթահէա քաղաքում: Նրա հայրը՝ Գէորգը բնիկ տեղացի էր, իսկ մայրը՝ Թագուհին Բրուսիայից: Սոլոմն Գէորգեանի կենսագիրները պատմում են որ եւ նրա հայրը կենսագիրները ունեցել են լաւ ձայն ու Հայոց եկեղեցում եղել են աչքի ընկնող յոց եկեղեցում եղել է բանական պատճենագույն համար: Բացի այդ, տաղանդաւոր արուեստագէտի համար հայրը ունեցել է բանաստեղծական շնորհք եւ գրել է թուլքերէն բանաստեղծութիւններ ու եղանակներ յարմարացներ գրանց. յետագայում, այդ երգերից մի քանին կոմիտաս վարդապետը գրի է առել:

Երբ գեռ Սոլոմնը մի տարեկան է լինում՝ մայրը վախճանուում է:

Հայրը նրան յանձնում է տեղական վարժարանը. 1880 թուականին նա վերջացնում է: Միջնակարգ կրթութիւն ստանալու համար, նա անցնում է Բրուսա, բայց հազիւ մի տարի է մնում: Հօրը մահուան պատճառով Սոլոմնը վերադառնում է հայրենիք:

1881 թուին, Կուտահնայի վոխառաջնորդ Գէորգ Վարդապետ Դերձակեանը Էջմիածին էր գնում եպիսկոպոս ձեռնադրուելու: Հայոց այն ժամանակուայ կաթողիկոս, երաժշտութեան սիրահար Գէորգ Դ. Պղը, հրաման էր տուել որ Դերձակեանը իր հետքերի լաւ ձայն ունեցաղ մի որբ: Վերջինս մնում է շուարած, որովհետեւ չի կարող ընտրութիւն կատարել որբերի միջեւ: Քսան աշակերաների (ուրիշների գրածների համացյն քառասուն աշակերտների) մէջ վեճակը ընկնում է Սողոմոն Գէորգեանին: Բախտը այդ օրուանից սկսում է ժպաել Կոմիտասին:

Դերձակեանը մանուկ Սողոմոնին իր հետ առնելով Պոլսց վրայով անցնում է Էջմիածին:

Սողոմոնին ներկայացնում են կաթողիկոսին. վերջինս սկսում է հարց ու փորձ անել: Այդ ժամանակաշրջանում թրքական որոշ կուսակալութիւնների մէջ Հայերը թրքախօս էին: Դպրոցներում մեծ զյժ էր արուած թուրքերէն լեզուին: Ամեն առարկայ անցնում էին այս լեզուով: Հայերէնը աւանդուում էր Հայոց գալոցներում որպէս օտար լեզու: Այդ իսկ պատճառով նրանք չեին կարող հայերէն խօսել: Սողոմոնը լինելով թրքախօս մի վայրից՝ հայերէն չէր դիտեր խօսել:

Երբ կաթողիկոսը սկսում է նախնական հարց ու փորձ անել, մանուկ Սողոմոնը պատասխանի փոխարէն գլուխին է թափ տալիս կամ պատասխանում է թուրքերէն լեզուով: Գէորգ Դ. Պղը բարկանում է եւ ասում.

— «Դու զուրես եկել այստեղ, որովհետեւ մեր գալոցում ամէն առարկայ հայերէն լեզուով է աւանդուում»:

Սողոմոնը իրենց առաջնորդի միջոցով պատասխանում է կաթողիկոսին, որ հենց հայերէն սովորելու համար է եկել Էջմիածին:

— Երգել դիտես, հարցնում է Վեհափառը:

— Այս, պատասխանում է երեխան: Եւ մանուկ Սողոմոնը, որ իր մայրենի լեզուով խօսիլ չդիտել, սկսում է Հոյս Զուալթ, շարականը երգել այնքան անոց, այնքան քաղցր, որ Գէորգ Դ. Պղը կաթողիկոսը սկսում է դառնազին: Եւ աղիոզորմ արտասուել:

Այս բաւական էր: 1881-82 ուսումնական տարեշրջանին, Սողոմոնը գառնում է Ճեմարանական, որպէս գիշերօթիկ: Աշակերտութեան առաջին խակ օրերից Սողոմոնը աչքի է ընկնում իր ընդունակութիւններով եւ աշխատասիրութեամբ: Մեծ եռանդով նուիրում է իրեն երգեցողութեան եւ կարծ ժամանակաշրջանում գրաւում է բոլորի ու շաղրատթիւնը: Հայերէն սովորում է շատ շուած եւ Սողոմոնը ապագայում դարձաւ նաև լաւ հայագէտ:

Երբ Գէորգ կաթողիկոսը, շարաթ երեկոներ եւ կիրակի առաւտօններ տաճարն էր իջնում, հայրապետական աթոռի մօտ կանգնուում էին Սողոմոն Գէորգեան եւ Տիգրան Ռէթ էուեանը, որոնք իրենց գեղեցիկ ձայնով յուզում էին պատճառում ունկնդիրներին:

Կոմիտաս վարդապետ երկրորդ դասարանի աշակերտ է լինում, երբ նրա գարնկերներից մէկը՝ Քէօրփալուցի (Էջմիածնի մօտ) մի Ճեմարանական, բարեկենդանին նրան հիւր է տանում: Նա այդ գիւղում, շինականի ախոռում, առաջին անգամ լրսում է ժողովրդական երգը, որը նրա համար մի յայտնութիւն է լինում: Նա մինչեւ այն ժամանակ անգիտանում էր թէ ինչ է ժողովրդական երգը, այն ինչ որ ապագայում նրա արուեստի հիմնաքարը պիտի լինէր: Անմիջապէս ձայնազրում է լսած երգը, ինդրում է ուրիշներ երգել եւ գալրձեալ ձայնազրում է: Այնուհետեւ ժողովրդական երգերի ձայնազրումն եւ ուսումնասիրութիւնը դառնում է նրա մէջ համարեա կիրք¹»:

¹ Տ. Զարէն «Կոմիտաս վրդապետական արուեստը», Մայրակ 1905 թ.

Դ. րդ գասարանից՝ Մակար կաթողիկոսի ժամանակ, նա դառնում է զիտաւոր դասապետ:

Զ. րդ գասարանի աշակերտ եղած ժամանակաշրջանում սարկաւագ է ձեռնադրուում (1890ի):

1893 թուին, Սողոմոն Գէորգեանը վերջացնում է լսարանական դասընթացքը եւ նոյն թուի սեպտեմբեր 11-ին, Խրիմեան Մկրտիչ կաթողիկոսութեան օրով արեղա է ձեռնադրուում, Կոմիտաս կոչուելով: Ճիշտ նոյն թուականին նա նշանակուում է ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ:

Երկու տարի յետոյ, այն է 1895ին, Կոմիտասը ընդունում է վարդապետական կոչումը:

Կոմիտասից առաջ երգեցողութեան ուսուցիչ էր կանչալ ել Կարա-Մուրզու (1892—93), բայց հոգեւորականութիւնը պարագլուխ ունենալով Խրիմեանը նրան հեռացնում են պաշտօնից, որովհետեւ նա քառաձայն երգեցողութիւն է մտցնում: Այսաեղ պէտք է յիշատակել որ Հայոց կաթողիկոս Խրիմեանը բնաւ դաշտիար չէ ունեցել երաժշտութեան մասին:

Կոմիտաս վարդապետը նշանակուելով երգեցողութեան ուսուցիչ, կազմում է երգեցիկ խումբեր եւ սեղական գործիքներից՝ նուագախումբ (orchester):

Սակայն այն ինչ որ նա ձեռք բերեց էջմիածնի վանական պարիսպների մէջ շատ քիչ էր: Հոգով երաժիշտը ծարաւ էր զգում խորը ուսման: Իր ունեցած պաշտով կոմիտաս վարդապետը խոչընկուների էր հանդիսավոր մասնագիտորէն պարապելու եւ ուսումնասիրելու համար: Մրա ամենամեծ ցանկութիւնն էր իրեն ձգել երաժշտական լուսաւոր մի կենդրոն, գեղարու հստական բարձր մի աշխարհ:

Յայտնի հարուստ Մանթաշեանը նրա նիւթական ապա ովութիւնը իր վրայ է առնում եւ Կոմիտաս վարդապետը 1896

թուի, Մայիս ամսին մեկնում է Գերմանիա, հայրենիքը երաժշտական մեծ հանձար՝ Բէթհովենների եւ Վագներների:

Երկայնում է աշխարհահաջախակ ջութակահար եւ մեծ երաժշտագէտ է: Յամիմիմին, որը այդ ժամանակ Բերլինի երաժշտանոցի (conservatoire) տեսուն էր:

Մեծանուն արուեստագէտը մանրակիտ եւ երկար քննում է Կոմիտասին եւ յանձնարարում նրան՝ սովորելու երաժշտագէտ Ռիխարտ Շմիթի (Richard Schmidt) մօտ: Ռիխարտ Շմիթը համարուում էր մեծ երաժշտագէտ եւ Բերլինում ուներ մասնաւոր երաժշտանոց: Նա յանձն է առնում Կոմիտասի հետ առանձնապէս պարագիլ, նկատելով նրա մէջ արտակարգ տաղանդ եւ ընդունակութիւններ:

Գիշեր ու ցերեկ յամառ կերպով աշխատում է Կոմիտաս վարդապետը: Դաշնակի դասերը լինում են շատ ծանր, բայց նրա կամքը եւ աշխատանքի բուռն եռանդը խորտակում է ամէն մէկ գժուարութիւն: Պրոֆ. Շմիթի մօտ նա սովորում է երեք տարի եւ 1899 թուին աւարտած տեսական եւ գործնական երաժշտութեան ամբողջ դասընթացքը, մի ժամանակ անցնում է Էջմիածնից եւ ապա Էջմիածնին, ուր բուլը սրտապարոփ սպասում էին նրա վերաբարձին:

Միաժամանակ Կոմիտաս վարդապետը սովորում է Բերլինի համալսարանում եւ աւարտում: Նա խոր կերպով ծանօթանում է գեղարուեսի եւ մասնաւորաբար երաժշտութեան փիլիսոփայութեան եւ պատմութեանը հետա:

1899 թուի սեպտեմբերին, Հիմնական եւ խոր պատրաստութեամբ Հայր Կոմիտասը վերադառնում է Էջմիածնին եւ նոյն թուի գլուխական տարի շրջանին նշանակուում է Ճեմարանի երաժշտութեան Պրոֆէսոր: Մրա համար այս անդամ բացուում է լայն ասպարեզ:

Նշանակուելով երաժշտութեան ու-

սուցիչ, նրա առաջին ձեռնարկը լինում է նուագարաններ բերել եւ orchester կազմել: Քիչ ժամանակ անց նա հիացմունք է ստեղծում իր շուրջը: Մայր տաճարի համար կազմակերպում էնաեւ երգեցիկ խումբ:

Նրա աշակերտները գրում են եւ պատմում որ նա ելել է շատ բարեխիղջ ու սուցիչ, պահանջող եւ արդիւնաւէտ:

Կոմիտասի աշակերտներից Հ. Տէր-Աստուածատրեանը այսպէս է գրում. “Հինելով նրա աշակերտ ես յիշում եմ թէ ինչպէս հետաքրքրութեամբ լսում էի նրան (թէպէտ երկու երեք ամիս միայն), մինչդեռ երբ Եկմալեանի մօտն էի ուսանում, միշտ դասից փախուստ էի տալիս¹:”

Տաղանդաւոր արուեստագէտը երկար տարիներ ապրում է Էջմիածնում, յամառ կերպով աշխատում է, զրի է առնում հայ ժողովրդական երգեր եւ ներդաշնակում: Էջմիածնում խաւարամիտ միաբանները սկըսում են բամբասել երաժշտական մեջ վիշտ է պատճառում եւ նա ապրում է դառն օրեր: Քաշուած իր խուցի մէջ, նա աննկուն կերպով աշխատում է, մոռանալով առօրեայ կեանքն ու մարդու չար խօսքերը:

Այդ ժամանակաշրջանում նա դարձեալ առիթ է ունենում գիւղեց գիւղ թափառել եւ հաւաքել հայ գեղջուկի հոգուց ու սրտից բղնած երգը:

Էջմիածնում որոշ տարիներ մնալուց յետոյ, նա դարձեալ իրեն ձգում է Եւրոպա, այս անգամ դասախոսութիւններ եւ համերգներ տալու ցանկութեամբ:

1907 թուին Կոմիտաս վարդապետը վրադառնում է Կովկաս, նոր ուսումնասիրութիւնների եւ նոր նիւթեր հաւաքելու համար:

Օսմանեան սահմանադրութիւնից երկու տարի անց նա անցնում է Պոլիս եւ նպատակ է դնում իրեն թրքահայ երիտա-

սարդներին երաժշտական կրթութիւն տալու: Այստեղ պէտք է յիշատակել որ Կոմիտասի աշխատանքները Պոլսում մեծ հընչակ տուին իր անուան:

Պոլսում կազմակերպուած անսովոր համերգներ եւ դասախոսութիւններ դեռ բոլորիս յիշողութեան մէջ թարմ են մնում ինչպէս այսօր: Նա գաղափար է ունենում հիմք զնելու երաժշտանոցի (conservatoire): Կազմուում է մի մասնախումբ այդ ուղղութեամբ աշխատանքներ կատարելու եւ նիւթական լայն միջոցներ ստեղծելու համար:

Համաշխարհային պատերազմը սակայն տակն ու վրայ արաւ ամեն ինչ: Տարաբախտ արուեստագէտի գաղափարը մնաց լոկ երազ:

“1914 թուին Պարիսում կազմուած ընդհանուր ազգայ երաժշուութեան պատմութեան գրքին մէջ Հայերը տեղ չունեին. աղմուկ բարձրացաւ, Պարիսէն սկսած, արձագանգելով անմիջապէս Պոլսս եւ համելով գաւառ: Կազմողները առարկեցին թէ Հայը չունի ինքնուրոյն երաժշտութիւն, մինչ քուրտերն ու ամենայետին ազգերը հոն տեղ ունեին: Ու ահա ապիկար շուարում մընէր տիրեց Հայ հրապարակին վրայ, բոլորն էլ հաստատապէս համոզուած, որ իրենք արժանաւորապէս ունին ինքնուրոյն երաժշտութիւն եւ բոլորն ալ անձարակօրէն անկարող են զայն հաստատելու: Եւ հազարաւոր աղերսագին աչքեր Եւրոպայէն ու դաւառէն ինկած էին Կոմիտաս վարդապետի վրայ: Եւ ահա բեղմնաւոր ու սրտմաշուք լուութիւնէ մը յետոյ Ազատամարտի մէջ Կոմիտաս վարդապետ գիտնականօրէն, վըձռական եւ հատու՝ զրեց Հայը ունի իր ինքնուրոյն երաժշտութիւնը: Այս ապացուցէն յետոյ, երբ արդէն ուշ էր, խոստացան պաշտօնապէս, երկրորդ տպագրութեան բաժին յատկացնել նաեւ հայկական երաժշտութեան: Ասկէ քիչ յետոյ էր, որ տեղի ունեցաւ Կոմիտաս վարդապետի նշանաւոր առաքելութիւնը Պարիս, ամէն կողմէ երաժշտագէտներու շրջանակի մը մէջ դաւ-

¹ “Բիւզանդիան” 1902

սախօսութիւններու իր շարքը տալու համար, որոնք անօրինակ յաջողութեամբ վերջացան։ Չեմ մոռնալու երբէք այն խօսքը, որ վարդապետը խանդավառօրէն ըստաւ, թէ ինչպէս Եւրոպայի ծերունազարդ երաժիշտաներ ուզած են ձեռքը համբուրել յայտնելով, որ “վարդապետ, դուք արեւելեան երաժտութեան համար մեզի նոր բանալիներ չնորհեցիք”¹։

Պարիսում կարդացած դասախօսութիւններից յետոյ, կոմիտաս վարդապետը վերադառնում է Պոլիս։

Բռնկուում է համաշխարհային պատերազմ։ Հեռաւոր ովկիանոսի ափերից մինչեւ Վուփորի գեղածիծաղ ափերը, միջին Եւրոպայից մինչեւ Կովկասեան դռները իրաւունքը տեղի է տալիս թնդանօթին։ Մռացուում է եւ գիր, եւ գրականութիւն եւ գեղարուեստ։ “Քաղաքակիրթ”, Եւրոպայում տաղանդներն եւ հանձնարները լռութեան են զատապարտուում եւ ոմանց բոլորը խեղդուում է հրացանների շաշիւնների մէջ։ Օսմաննեան կայսրութեան մէջ ապրող հայ գրագէտներ, գործիչներ եւ գեղարուեստագէտներ ոչ թէ լռութեան են դատապարտուում, այլ նրանց առաջնորդում են դէպի մահ։

Եւ ահա մեր տարաբախտ երաժշտագիտը, կոմիտաս վարդապետ, 1915 տագէտը, կոմիտաս վարդապետ, 1915 թուի ապրիլ 11-ին Պոլսոյ մոաւորական-ների հետ աքսորուում է Ասիայի խորերը։ Զգայուն երաժիշտի հոգու վրայ այս պատասխանները ոչ թէ լռութեան են դատապարտուում։

Կոմիտաս վարդապետը կարողանում է միջնորդութեամբ Պոլիս վերադառնալ։ Այդ ժամանակաշրջանում նա գտնուում է նիւթական աննախանձերի պայմաններում։

Մի կողմից անխոնջ ու յամառ աշխատանքը, աքսորի կրած վախն ու սպասափր եւ միւս կողմից աննկարազրելի պատ-

կերներ ու ջարդեր անդրադառնում են կոմիտաս վարդապետի հոգեկան աշխարհի վրայ եւ նա մի դժբախտ օր դառնում է խելագար։

Շուտով հնարաւոր է լինում հիւանդը բժշկել։ Սակայն ապաքինումը ժամանակաւոր արժէք է ունենում միայն։ Երկրորդ հիւանդութիւնը լինում է ծանր եւ անբուժելի։ Զինադադարից անմիջապէս յետոյ, կոմիտաս վարդապետին փոխադրում են Պարիս, ուր մինչեւ այսօր մեծանուն արուեստագէտը, մենակ, անմիսիթար, կեանքի դառնութիւնները ծաշակած, ապրում է իր կեանքի վերջալցուը։

(Ը-բ-բ-ն-է-լ-է-)

Դ. ԹէրէլէՄէջնեան



ՍԱՑԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՄԱՑԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1923 ՏԱՐԻ 03

1. Լեզու եւ Մատենագրութիւն։

Տաճիկ բառի ծագումը։ Թէսդիկ, ԺԷ. 1923, 354—356, Կամփութ այս հարցի մասին յայտնուած կարծիքները։ Լ. Մեսրոպի (Ճակատամարտ 1921, Հոկտ. 25), Գ. է. մարդ Մեսրոպի (1921, Գեկտ. 16), Մարկոսարտի (1922, Փետր. 8), Տէրոյենցի (Երեւակ 1861, Յուն. 16)։

Meillet A.: A propos de Կարդէ։ Rev. Et. Arm. II, 2, 1923, 238—234. Սցն գաղափարը բացարող երեք իրանական բառաձեւերեւն մին է հայ Կարդէ։

Մեսրոպեան Սահակ “Հայ-Երանական Ուսումնականութիւնքն Յ. Թիրեագեանի (գրախօսական), Պայքար, Ա., 1923, Թիր. 88, 89, 90, 91։ Հ. Ա. Տիրական, Իջ. Պ., 1923, 147—150։

Աբեղեան Ա. Բոգոֆ. Մառ եւ Հայերէնի ծագման խնդիրը, Յուսաբեր (Նոր Ը., Թ. տարի) 1923, թիր. 14, 15։

¹ Հրաչ, “Հայաստանի օրաթերթ, 1917 թ.,